

Հաշվետվություն

**Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության՝
ՀՀ կառավարության աշխատակազմի 2015 թ և 2015-2016 թթ.
հակակոռուպցիոն միջոցառումների կատարողականի վերաբերյալ**

Միջոցառումների 19-րդ կետ

Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայություններն էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագրի մշակում և իրականացում

Արդյունք

Դեռևս 2008թ. օգոստոսի 28-ի նիստում N 35 արձանագրային որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանության է արժանացրել «<Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը>>», որում ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգային դրույթները և ժամանակացույցը՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վերլուծության և համադրման վրա: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման համալիր ծրագրի մշակման անհրաժեշտությունը՝ մշակվեց և 2010թ. փետրվարի 25-ին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացավ «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը»: Հայեցակարգը ներառում էր էլեկտրոնային հասարակության ձևավորմանն ուղղված ռազմավարական մոտեցումները և 2010-2012թթ. միջոցառումների ժամանակացույցը:

2014թ. ապրիլի 10-ի նիստի N 14 արձանագրային որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել էլեկտրոնային կառավարման ռազմավարական ծրագիրը, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործարարության և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն դիրքավորելու և էլեկտրոնային կառավարման ձևավորման համար խիստ կարևորվում է կառավարության հետ քաղաքացիների և մասնավոր հատվածի ազատ և թափանցիկ էլեկտրոնային փոխշփումների ու փոխադարձ կապի ապահովումը, որը հնարավոր է իրականացնել բարձրորակ, դեպի սպառողը կողմնորոշված էլեկտրոնային ծառայությունների մատուցման և

սպառողական կառավարման (customer management) առաջադեմ մեթոդների կիրառման միջոցով, որի արդյունքում կապահովվի էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական բաղադրիչների (տեղեկատվական շտեմարաններ, կառավարման տեղեկատվական համակարգեր, կայքէջեր և պորտալներ, տեղեկատվության հաղորդակցական ենթակառուցվածք, իրավական համակարգ, անվտանգության համակարգ, ստանդարտներ, միասնական անվտանգ նույնականացման համակարգ, էլեկտրոնային ստորագրություն) ներդաշնակ աշխատանքը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարման զարգացման բարձր տեմպերը՝ մշակվել է էլեկտրոնային կառավարման միջոցառումների ժամանակացույցը:

Էլեկտրոնային կառավարման միջոցառումների ծրագրի հիմնական նպատակներն են՝ բարելավել հանրային ծառայությունների մատուցումը և դարձնել այն հասանելի ու հարմարավետ յուրաքանչյուր քաղաքացու համար, ապահովել էլեկտրոնային ծառայությունների հասանելիությունը Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուրի համար և թույլ տալ մուտք գործել համակարգ շուրջօրյա՝ 24/7, այլ քաղաքներից, գյուղերից կամ նույնիսկ երկրից դուրս: Էլեկտրոնային կառավարման համակարգի հետագա ընդլայնումը և կատարելագործումը նպաստելու է հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը, ընձեռելու է որոշումների կայացման գործընթացներին հետևելու հնարավորություն:

Էլեկտրոնային կառավարման միջոցառումների ծրագիրը ներառում է նոր էլեկտրոնային ծառայությունների մատուցում, էլեկտրոնային կառավարման համակարգի շարունակական իրագործում բոլոր պետական և տարածքային կառավարման մարմիններում (էլեկտրոնային կրթություն, էլեկտրոնային առողջապահության համակարգ, սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգ (այդ թվում՝ էլեկտրոնային կենսաթոշակ), Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) էլեկտրոնային համակարգ, էլեկտրոնային վիճակագրական հաշվետվությունների համակարգ և այլն)՝ բարձրացնելու պետության և քաղաքացիների միջև կատարվող գործարքների թափանցիկությունը, ապահովելով պետություն-մասնավոր-քաղաքացի արդյունավետ փոխգործակցությունը և բարելավելով գործարար միջավայրը:

Դեռևս 2012 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ կառավարությունն իր N 43 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացրել Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին: Այս ծրագրով Հայաստանի Հանրապետության

առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգը, որպես տեղեկատվության և ենթակառուցվածքների ամբողջություն, պետք է ապահովի հասարակության յուրաքանչյուր անդամի վերաբերյալ բժշկական տեղեկատվության հավաքագրումը, արխիվացումը և օգտագործումը առողջապահության ոլորտի մասնագետների կողմից էլեկտրոնային միջավայրում: Համակարգի ներդրման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում առողջապահության բնագավառում անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը, որն ապահովելու է հանրապետության յուրաքանչյուր բնակչի վերաբերյալ լիարժեք բժշկական տեղեկատվություն՝ միասնական և ամբողջական ձևաչափով, որի միջոցով նաև հավաքագրված էլեկտրոնային տեղեկատվությունը կարող է կիրառվել տարբեր նպատակներով, մասնավորապես՝ անձի վերաբերյալ բժշկական մանրակրկիտ տեղեկատվություն ստանալու և համապատասխան բժշկական ծառայությունների մատուցման համար, բժշկական ծառայությունների դիմաց փոխհատուցումներ կատարելիս, ուսումնասիրությունների, վերլուծությունների նպատակով և այլն: Համակարգի մասնակից կարող են դառնալ ինչպես Հայաստանի Հանրապետությունում գործող ցանկացած բժշկական հաստատություն, այնպես էլ բժշկական ապահովագրության ծառայություն մատուցող ապահովագրական ընկերություն: Համակարգի բոլոր մասնակիցներն ապահովված կլինեն տեղեկատվական միասնական համակարգին միացված և տեխնիկական բավարար հատկանիշներ ունեցող համակարգիչներով, որոնց ձեռքբերումը և տեղադրումը իրականացվելու է մասնակիցների կողմից: Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգը կինտեգրվի օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստագրված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնի հետ համատեղ:

2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանել է, որ էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջների հաշվառմամբ կնկարագրվի «էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգը, դրա հիմնական բաղադրիչները (ներառյալ՝ համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովող ենթահամակարգերը), տեղեկատվության համալրման աղբյուրները, տվյալները տեղեկատվական համակարգ մուտքագրելու (պահպանելու, արդիականացնելու) սկզբունքները, մեթոդաբանությունը: Արդյունքում ձևավորվելու է տվյալների ցանկ՝ ըստ սոցիալական ծառայությունների, ներառյալ՝ դրանց ստացման աղբյուրները և ստացման եղանակը (մուտքագրվում է ձեռքով, այլ

տեղեկատվական բազաներից ստացվում է ինքնաշխատ եղանակով, գեներացվում է տեղեկատվական շտեմարանում): Բացի այս, նկարագրվելու են սոցիալական ծառայություններ մատուցելու ընթացակարգերը, ներառյալ՝ տվյալները «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգ մուտքագրելու սկզբունքները, մեթոդաբանությունը, մուտքագրված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու պայմանները, յուրաքանչյուր տվյալի կիրառական նշանակությունը և այլն:

2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 47 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի ներդրումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին, «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանք ներառող նվազագույն տեղեկատվության ցանկին: Որոշմամբ ընդունվել է ի գիտություն, որ «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2014 թվականի մայիսի 23-ին ստորագրված՝ Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագրի (վարկ N 5398-ԱՄ) միջոցներից: Բացի այս, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին տրվել է հանձնարարական՝ «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջների հաշվառմամբ:

Համաձայն 2014թ. իրականացված համազգային հարցման՝ Հայաստանում էլ. պատրաստությունը գնահատվում է որպես բարձր: Հիմնական ենթակառուցվածքները և դերակատարներն առկա են, ուստի բնակչությունը հիմնականում պատրաստ է շարժվել դեպի էլ. հասարակության զարգացում: Ավելի կոնկրետ, Հայաստանի տնային տնտեսությունների 82% ունի ինտերնետ հասանելիություն, իսկ անհատների 62% դրանից օգտվում է ամեն օր: Բնակչության կեսից ավելիի համար ինտերնետը կարևոր է դարձել ամենօրյա կյանքի, կրթության, աշխատանքի և հասարակական կյանքի համար: Ապագայում էլ. հասարակության զարգացումը կլինի անգամ ավելի արագ, քանի որ երիտասարդ սերունդն ունի բավական կատարելագործված էլ. հմտություններ և հաճախ է օգտագործում

ինտերնետն ամենօրյա կյանքում: Ուստի կարող ենք ենթադրել, որ մոտակա տարիներին կառաջանա կատարելագործված էլ. ծառայությունների ավելի մեծ պահանջարկ և կառավարությունը պետք է ջանքեր գործադրի համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար:

Էլ. կառավարման ծրագրերի մշակման առումով պետական հաստատությունները և նախարարությունները գտնվում են տարբեր փուլերում: Պետական կազմակերպությունների մեծամասնությունը միացված է Կառավարության ցանցին և ունի SS ներքին ստորաբաժանում: Բոլոր նախարարություններն օգտագործում են Մալբերրի համակարգը: Լայնորեն կիրառվող տեղեկատվական համակարգերը ներառում են Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, ՀԾ-Հաշվապահը, ԼՍ Ֆինանսները, Հաճախորդ-գանձապետարանը, հարկային հաշվետվությունների լրացման էլեկտրոնային համակարգը, Պետական գնումների համակարգը և Ներքին աուդիտի ինտեգրված կառավարման տեղեկատվական համակարգը:

Ֆինանսների նախարարությունն ունի էլ. կառավարման առավել կատարելագործված համակարգ: Նախարարության տեղեկատվական համակարգը վկայագրված է՝ համաձայն ISO/IEC 27001: 2005 միջազգային ստանդարտի, ուստի այն ներառում է կիրքեր անվտանգության, տվյալների պաշտպանության, թվային արխիվացման և տվյալների բազաների մշակման աշխատանքային պլաններ: Կազմակերպության տվյալների բազաները փաստաթղթավորվում են: Այս նախարարությունը կարող է օրինակ ծառայել բոլոր պետական կազմակերպությունների համար: Կարևոր է, որ նախարարությունների մեծամասնությունն ընդգծել է պետական այլ գործակալությունների հետ համագործակցության, փոխգործունակության և հաղորդակցության զարգացման անհրաժեշտությունը և պատրաստակամությունը:

Քսան հիմնական էլ. ծառայությունների գնահատականը ծառայում է որպես երկրի հանրային ծառայությունների ընդհանուր գնահատման հիմնական ստանդարտ: Հիմնական ծառայությունների գնահատումն իրականացվել է: Բացահայտվել են բոլոր ծառայությունների թերություններն ու առավելությունները, և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ հետագա բարելավման համար:

ԵՄ 28 երկրների էլ. ծառայությունների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ որոշ էլ. ծառայությունների մասով Հայաստանն ունի բավական բարձր մակարդակ: Սա հիմնականում վերաբերում է գործարար ծառայություններին, ինչպիսիք են՝ եկամտահարկը, ընկերությունների գրանցումը, ԱԱՀ, շահութահարկը: Ինչ վերաբերում է կառավարության կողմից քաղաքացիներին մատուցվող

ծառայություններին, Հայաստանը գրեթե բոլոր դեպքերում զիջում է: Մասնավորապես, անհրաժեշտ են զգալի ջանքեր անձնական փաստաթղթերի, բարձրագույն կրթություն ստանալու և առողջապահական ծառայությունների հետ կապված կարևոր էլ. ծառայությունների մատուցման մասով:

Ընթացիկ իրավիճակի ընդհանուր գնահատականը հնարավորություն է տալիս պնդել, որ Հայաստանի կառավարությունն, ինչպես նաև բնակչությունը, պատրաստ են և ցանկանում են կատարելագործել էլ. կառավարումը և այժմ ճիշտ ժամանակն է փոխգործակցության ցանցի ստեղծման համար՝ ավելի շատ և ավելի լավ էլ. ծառայությունների մշակման համար:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարման 2015-2016թթ. միջոցառումների ցանկում ընդգրկվել է հետևյալը.

1. Էլեկտրոնային կառավարման միասնական տեխնոլոգիական պլատֆորմ,
2. Կրթություն և գիտություն,
3. Առողջապահություն,
4. Էլեկտրոնային ծառայությունների շարունակական զարգացում,
5. Փաստաթղթերի թվայնացում և տվյալների արխիվացում:

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարման 2015-2016թթ. միջոցառումների շրջանակում 2015թ. 3-րդ եռամսյակում իրականացվել է՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի ընթացիկ վիճակի վերլուծություն, փոխգործելիության շրջանակի մշակում և էլեկտրոնային ծառայությունների ինտեգրված ենթակառուցվածքի պահանջների մշակում, որոնց կատարման պատասխանատու մարմին էր նշանակվել ՀՀ կառավարության աշխատակազմը և <<Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գասենյակ>> (ԷԿԵՆԳ) ՓԲԸ):

Միջոցառումների 22-րդ կետ

Պետական մարմինների կողմից լիցենզիաների էլեկտրոնային եղանակով տրամադրման խթանում՝ դիտարկելով էլեկտրոնային եղանակով լիցենզիաների (առնվազն պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ) տրամադրման հնարավորությունը:

Արդյունք

Դեռևս 2010 թ.-ի վերջին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և դրան կից ընդունված 15 այլ ՀՀ օրենքներով կրճատվել են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները: Օրենքի նպատակն է եղել գործարարներին ավելորդ ծանրաբեռնվածությունից ազատելն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Ժամանակին համընթաց քայլերով և նպատակ ունենալով բարելավել քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեռևս 2011-2012 թթ. ձեռնամուխ էր եղել էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրել է լիցենզավորման տարբեր տեսակների համար հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգ՝ www.e-gov.am/licenses, որով այժմ ավտոմատացված է անհրաժեշտ փաստաթղթերի հայտագրման գործընթացը և հայտատուն պետք է միայն մեկ անգամ այցելի գերատեսչություն և ստանա լիցենզիա, իսկ էլեկտրոնային ստորագրություն ունենալու դեպքում էլեկտրոնային լիցենզիան կարող է ստանալ իր անձնական էլեկտրոնային փոստին՝ պետական մարմին ֆիզիկապես չներկայանալով:

Այս ձևաչափով լիցենզիաներ տրամադրում են գրեթե բոլոր պետական կառույցները, բացառությամբ ՀՀ Կենտրոնական բանկի, որը շատ ավելի բարդ ընթացակարգեր ունի: Բացառություն են կազմում ևս մի քանի լիցենզիաների տեսակներ, որոնք վերաբերում են ատոմային էներգետիկայի, զենքի առևտրի ոլորտներին: Առայժմ թվանշայնացված չեն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրվող լիցենզիաները: Ըստ այսմ, ստեղծվել է այնպիսի միջավայր, որը թույլ է տվել կրճատել քաղաքացիների և պետական պաշտոնյաների միջև «ֆիզիկական» շփման հնարավորությունը, ինչն իր հերթին ենթադրում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցում: Բացի այս, ուսումնասիրվել է լիցենզավորման ոլորտը կարգավորող իրավական ակտերի շրջանակը, արձանագրվել են որոշ խնդիրներ և առաջարկվել են լուծումներ: Հիմնական խնդիրները հետևյալն են.

- լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար անձինք պետք է բավարարեն որոշակի պահանջների, որոնց հավաստիացման համար պետք է ներկայացնեն համապատասխան փաստաթղթեր.

- լիցենզիայի որոշ տեսակների տրամադրումը կրում է ծախսատար և ժամանակատար բնույթ, սակայն, ըստ էության, հսկողության էական մեխանիզմներ չի պարունակում.

- լիցենզիա ստանալու համար որոշ դեպքերում անհրաժեշտ է ներկայացնել տվյալներ և փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը բացակայում է.

- պարզ լիցենզիաներ տրամադրելիս լիազոր մարմինն, ըստ էության, կատարում է հաշվառման գործառույթ, իսկ բարդ լիցենզիաների որոշ տեսակների տրամադրման ժամանակ՝ զուտ փաստաթղթային ուսումնասիրություն:

ՀՀ կառավարությունը որդեգրելով տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման, գործարար միջավայրի և շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացման, պետության կողմից քաղաքացիներին և բիզնեսին մատուցվող ծառայությունների բարելավման և պարզեցման, գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման քաղաքականությունը՝ առաջ է քաշել մի շարք լուծումներ.

- ՀՀ տարածքում գործունեության որոշ տեսակների իրականացման համար ծանուցման մեխանիզմի ներդնում, այդ թվում՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ծանուցմամբ իրականացում.

- պահանջվող փաստաթղթերի էական կրճատում.

- ծանուցում ներկայացրած իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց լիազոր մարմնում հաշվառման կարգի սահմանում:

Այս ամենի արդյունքում սույն թվականի նոյեմբերի 13-ին ընդունվել է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-121-Ն օրենքը: Վերջինիս կիրարկմամբ ՀՀ տարածքում համապատասխան ոլորտներում գործունեություն իրականացնելու համար լիցենզավորման փոխարեն կներդրվի ծանուցման մեխանիզմ, ինչի արդյունքում կկրճատվի ավելորդ վարչարարությունը և կնվազեն տնտեսվարողների ծախսերը:

Միջոցառումների 24-րդ կետ

Լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայում բոլոր ոլորտներում՝ լրացուցիչ պահանջների հնարավորինս պարզեցում:

Արդյունք

«Հ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդի կողմից հանձնարարվել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՊՀ-ին (այսուհետ՝ ՕԿԱԿ) ուսումնասիրել մի շարք ոլորտների կարգավորումները և ներկայացնել առաջարկություններ համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերի կրճատման, պարզեցման, դրանցով սահմանված տնտեսապես ոչ արդյունավետ և աննպատակահարմար մեխանիզմների կրճատման վերաբերյալ:

ՕԿԱԿ-ի կողմից, ի թիվս սահմանված այլ ոլորտների, ուսումնասիրվել է լիցենզավորման ոլորտը կարգավորող իրավական ակտերի շրջանակը՝ նաև լրացուցիչ պահանջների հնարավորինս պարզեցման համար: Դրա արդյունքում արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- լիցենզիա տրամադրելիս որպես լիցենզիայի տրամադրման պահանջ սահմանված է նաև տվյալ գործունեությամբ զբաղվելու մասնագետների որակավորման պահանջը՝ մասնագիտական պատրաստվածությունը, ինչպես նաև հայցվող գործունեության բնագավառում ներգրավվող մասնագետի՝ առնվազն երեք տարվա աշխատանքայի ստաժի առկայությունը, այնինչ կարելի է ասել, որ նման պարտադիր պահանջը պրակտիկայում ձևավորում է այնպիսի հակափաստարկ, որ մասնագետների վերաբերյալ մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման վերաբերյալ պահանջը կարող է ձևական բնույթ կրել, քանզի դրանք կարող են փոխվել, կամ այդ մասնագետները կարող են փոխարինվել հենց դրանց ներկայացման հաջորդ օրը՝ հատկապես լիցենզիայի ստացումից անմիջապես հետո.

- մարդատար-տաքսի գործունեություն կարող են իրականացնել միայն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ միասին՝ կազմակերպություն)՝ լիցենզիայի առկայության պարագայում: Ընդ որում, լիցենզիա ստանալու համար իրավաբանական անձինք պետք է ունենան հավաքակայան, անցնեն ամենօրյա բուժզննում և տեխզննում, իսկ անհատ ձեռնարկատերերը միայն ամենօրյա բուժզննում և տեխզննում, որն իրականում կրում է ձևական բնույթ և վերաժվում է փաստաթուղթ գնելու, քանի որ չկան հստակ վերահսկման մեխանիզմներ: Լիցենզիա ստանալու համար կազմակերպությունները պետք է իրականացնեն յոթ քայլ/գործողություն, որից հինգն ուղղված է դեղին հիմնագույնի համարանիշի ձեռք բերմանը: Մասնավորապես, կազմակերպությունը պետք է դիմի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, վերցնի համապատասխան տեղեկանք, ներկայացնի ճանապարհային ուստիկանություն և այլն: Սա հանգեցնում է լրացուցիչ ժամանակի և ծախսերի: Իսկ ինչ վերաբերում է Երևան քաղաքից դուրս

գտնվող կազմակերպություններին, ապա վերջիններս ստիպված են գալ Երևան և Երևանում դիմել լիցենզավորող մարմնին: Այս խնդիրը թերևս առնչվում է լիցենզավորման ենթակա բոլոր ոլորտներին: Լիցենզավորման գործընթացը բավականին ժամանակատար է և առկա է ավելորդ փաստաթղթաշրջանառություն: Դեղին հիմնագույնի համարանիշ ստանալիս կազմակերպությունները պարտավոր են իրենց հիմնական համարանիշները հանձնեն ճանապարհային ուստիկանություն, ինչը սահմանափակում է ավտոմոբիլի սեփականատերերի կողմից իրենց ավտոմոբիլն այլ նպատակներով օգտագործելը և միևնույն ժամանակ պետության տեսանկյունից որևէ խնդիր չի կարգավորում.

- ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններն անցնում են երկու գործընթաց՝ լիցենզավորում և մրցույթ: Ընդ որում, լիցենզիա ունենալը հանդիսանում է մրցույթի մասնակցության նախապայման: Պետք է նշենք, որ լիցենզավորման ժամանակ կազմակերպություններին գրեթե որևէ պահանջ չի ներկայացվում, իսկ ներկայացվող մի քանի պահանջը (օրինակ՝ տրանսպորտային միջոցի տարիքը) ներառված է մրցույթի անցկացման կարգի մեջ: Ստացվում է, որ կազմակերպությունները հավելյալ անցնում են մեկ լրացուցիչ փուլ.

- էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորումների համաձայն այդ ոլորտում չի թույլատրվում գործունեություն իրականացնել առանց համապատասխան լիցենզիայի ստացման: «Լիցենզավորման մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքների համաձայն սահմանված էին «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում)», որը բարդ լիցենզիայի տեսակ է և «ձայնային ծառայությունների մատուցում», «տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում» պարզ լիցենզիաների տեսակները, որոնք բոլորը տրամադրվում են Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿՀ) կողմից: ՀԾԿՀ-ի կողմից ընդունված լիցենզավորման կարգում բացահայտվել են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ ավելորդ փաստաթղթային պահանջներ և մերժման հիմքեր, որոնք վերաբերում են բոլոր երեք լիցենզիաների տեսակներին: Ամենախնդրահարույց և անբարենպաստ կարգավորումը սահմանված է «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում)» բարդ լիցենզիայի տրման համար, մասնավորապես՝ պահանջվող փաստաթղթերը քանակը անհիմն ուռճացված է և ամենակարևորը պահանջվող փաստաթղթերը սպառիչ սահմանված չեն: Միաժամանակ սահմանվում է, որ լիցենզիայի հայտի ուսումնասիրությունը տևում է վեց շաբաթ, կարող է երկարաձգվել ևս երեք ամսով, ինչպես նաև բոլոր պահանջները բավարարելուց հետո սահմանվում է, որ լիցենզիան կարող է տրվել ոչ

շուտ, քան վեց ամիս հետո, իսկ վեց ամիսը լրանալուց հետո ընդհանրապես երբ է տրվում սահմանված չէ, քանի որ վերջնաժամկետ ամրագրված չէ:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման, շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացման, պետության կողմից քաղաքացիներին և բիզնեսին մատուցվող ծառայությունների բարելավման և պարզեցման, գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման քաղաքականությունը և նպատակ ունենալով բարելավել գործարար միջավայրը, այդ թվում՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի կրճատման ու վերանայման միջոցով, ՕԿԱԿ-ն առաջարկել է ՀՀ տարածքում լիցենզավորման ենթակա գործունեության 13 տեսակներ դարձնել ծանուցմամբ իրականացվող՝ հաշվի առնելով ուսումնասիրությամբ արձանագրված առկա իրավիճակը, վերը թվարկված խնդիրները և զարգացած ու զարգացող մի շարք պետությունների փորձը: Սա նշանակում է, որ տվյալ գործունեության տեսակներով զբաղվելու համար անհրաժեշտ կլինի ներկայացնել ՀՀ կառավարության կողմից սահմանված ձևի ծանուցում և վճարել օրենքով սահմանված պետական տուրքը: Այդ գործունեության տեսակներն են՝

- Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր
- Գյուղատնտեսության բնագավառի գործունեության տեսակները
- Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, բացառությամբ այն ծառայությունների, որոնց մատուցման համար անհրաժեշտ է տիրապետել և շահագործել էլեկտրոնային հաղորդակցության ցանց
- Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն
- «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն
- «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու արտադրություն, ներմուծում
- Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն

- Գարեջրի արտադրություն

- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում

- Առևտրի իրականացման վայրի կազմակերպում

Ըստ այդմ, գործունեության ծանուցման ընթացակարգի ներդնումը լիցենզավորման փոխարեն հնարավորություն է տվել՝

- էականորեն կրճատել ներկայացվող փաստաթղթերը,

- խնայել ժամանակը,

- սահմանել ծանուցում ներկայացրած իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց լիազոր մարմնում հաշվառման կարգ:

Առաջարկվել ու իրականացվել են հետևյալ գործընթացները՝

- Վերացել է բարդ և պարզ լիցենզիաների տեսակների հասկացությունն ու տարբերակումը: Այսուհետ կլինի լիցենզիա առանց տեսակի մասին նշումի:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ նախատեսելով անձի կողմից համապատասխան գործունեություն իրականացնելու համար ծանուցման ինստիտուտի ներդրումը:

- Լիցենզիա տրամադրելիս հանվել է տվյալ գործունեությամբ զբաղվելու մասնագետների որակավորման՝ մասնագիտական պատրաստվածության, ինչպես նաև հայցվող գործունեության բնագավառում ներգրավվող մասնագետի՝ առնվազն երեք տարվա աշխատանքայի ստաժի առկայությունը հավաստող փաստաթղթերը նախապես ներկայացնելու պահանջը: Սահմանվել է, որ այդ անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները լիցենզավորող մարմին պետք է ներկայացվեն մինչև լիցենզավորված գործունեության իրականացումն սկսելուց հինգ աշխատանքային օր առաջ:

- Հանվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների իրականացման համար լիցենզիայի պահանջը:

- Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման հնարավորություն է վերապահվել նաև ֆիզիկական անձանց:

- Ներդվել է մեկ պատուհանի սկզբունքը լիցենզավորման և հաշվառման գործընթացում: Հայտատուն դիմում է մեկ պետական մարմին:

- Հանվել են մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման համար պահանջվող ավտոմոբիլների կայանատեղիի առկայության, ավտոմոբիլների՝ ուղևորափոխադրումների դուրս գալուց առաջ տեխնիկական վիճակի վերահսկման, վարորդների ամենօրյա բուժզննման պահանջները:

- Կրճատվել է ավելորդ վարչարարությունը, մասնավորապես՝ ժամանակը և փաստաթղթաշրջանառությունը:

- Հանվել են «ձայնային ծառայությունների մատուցում» և «տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում» պարզ լիցենզիաների տեսակները, իսկ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում)» բարդ լիցենզիայի տրման ընթացակարգը էապես պարզեցվել է:

- Նախատեսվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների տրամադրման գործունեության իրականացման նախապայման Կարգավորող մարմնին գրավոր ծանուցելու պահանջը:

- Լիցենզիայի տրման ժամկետը սահմանվել է աշխատանքային օրերով, ներկայիս 30 օրացուցային օրը փոխվել է 23 աշխատանքային օրվա:

- Սահմանվել է, որ լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել լիցենզիայի տրման ավելի կարճ ժամկետներ:

- Սահմանվել է, որ լիցենզիայի տրամադրման համար պետական տուրքը կարող է վճարվել համապատասխան լիցենզավորող մարմնի դրական որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում և հայտատուն կարող է չներկայացնել վճարումը հավաստող անդորրագիրը: Պետական տուրքի վճարման մեջ էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է լիցենզավորող մարմինը:

- Արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել՝ սահմանվել է, որ էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության գործունեության լիցենզիայով անձին տրվում է նաև էլեկտրական կամ ջերմային կայանների կառուցման իրավասություն:

- Էլեկտրական կամ ջերմային էներգիայի և բնական գազի բաշխման կամ հաղորդման (փոխադրման) ցանցերի կառուցման գործունեության լիցենզիաները հանվել են, սահմանվել է, որ էլեկտրական կամ ջերմային էներգիայի և բնական գազի բաշխման կամ հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող անձինք, լիցենզիայով սահմանված աշխարհագրական տարածքում, իրավասու են էլեկտրական կամ ջերմային էներգիայի, կամ բնական գազի բաշխման կամ հաղորդման ցանցի կառուցման գործունեություն իրականացնել:

- Լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար մամուլում հայտարարություն տալու պարտադիր պահանջը և հայտարարության հրապարակումը հավաստող փաստաթղթերի ներկայացման պահանջը հանվել է:

Այսպիսով, արձանագրված փոփոխություններով ակնկալվող արդյունքը հանդիսանում է ոլորտի կարգավորման և բիզնես գործունեություն սկսելու

պայմանների բարելավումը և առկա խնդիրների վերացումը՝ միաժամանակ փոփոխելով համապատասխան կարգավորումներն այնպես, որ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք հնարավորություն ստանան ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել առանց ավելորդ պահանջների և ծախսերի: Կրճատելով ավելորդ վարչարարությունը և փաստաթղթաշրջանառությունը՝ ակնկալվում է բարձրացնել օրենսդրությամբ սահմանված կարգավորող մեխանիզմների կիրառման արդյունավետությունը:

Միջոցառումների 26-րդ և 27-րդ կետեր

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների (անձ/ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում:

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձի (առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով) նշանակում:

Արդյունք

2015 թվականի նոյեմբերի 20-ին բոլոր հանրապետական գործադիր մարմիններին տրվել է ՀՀ վարչապետի հանձնարարական՝ հանրապետական գործադիր բոլոր մարմիններում նշանակել հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու ստորաբաժանումներ, իսկ պատասխանատու պաշտոնատար անձանց պաշտոնի անձնագրերում կատարել համապատասխան փոփոխություններ և ամրագրել հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ:

Սույն թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնում տեղի է ունեցել քննարկում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի անվանացանկերի և գրանցամատյանների վարման վարչության պետ տիկին Գայանե Սաֆարյանի մասնակցությամբ, որի արդյունքում ձեռք են բերվել փոխհամաձայնեցված լուծումներ: Այսպիսով, հանրապետական գործադիր բոլոր մարմիններում նշանակվել են Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումն համակարգող պաշտոնատար անձինք՝ աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով, իսկ համապատասխան պաշտոնատար անձանց պաշտոնների անձնագրերում կատարվել են սահմանված փոփոխություններ:

Միջոցառումների 40-րդ կետը

Էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքների ներդրում:

Արդյունք

Այս ոլորտում միջոցառումների իրականացումը նախատեսված է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների շարքում:

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը պարբերաբար դասընթացներ է կազմակերպում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) շահագործման (ՀԿՏՀ ընդհանուր աշխատանք, ֆիզիկական անձանց և կազմակերպությունների ռեգիստր, համայնքի բյուջեի կառավարում, եկամուտների և ծախսերի պլանավորում, ֆինանսական միջոցների կառավարում, բյուջետային հաշվետվություններ, համայնքային գույքի կառավարում, էլեկտրոնային փաստաթղթեր, տեղական տուրքերի և վճարների կառավարում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, հանձնարարականներ, ավագանու ենթահամակարգ) վերաբերյալ:

Համակարգի ներդրումը սկսվել է դեռևս 2009 թվականին: ՀԿՏՀ միջոցով բաց կառավարման սկզբունքների գործածմամբ ՏԻՄ-երն իրականացնում են իրենց գործառույթները և տրամադրում տարատեսակ ծառայություններ: Առաջին փուլում ՀԿՏՀ ներդրվել է 217 խոշոր և միջին համայնքներում, իսկ այժմ այն ներդրված է ՀՀ բոլոր 10 մարզերի ավելի քան 580 համայնքներում, որտեղ բնակվում են այդ մարզերի բնակչության շուրջ 92 %-ը: ՀԿՏՀ անընդհատ զարգանում և կատարելագործվում է՝ համալրվելով նոր բաղադրիչներով և գործառնական հնարավորություններով:

Քաղաքացիներին մատուցվող ծառայությունները բարելավելու նպատակով 13 քաղաքային համայնքներում ստեղծվել են նաև քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ), որոնք գործում և ծառայություններ են մատուցում ՀԿՏՀ միջոցով: 2016 թվականի ընթացքում նախատեսվում է բացել քաղաքացիների սպասարկման գրասենյակներ ևս 8 համայնքներում:

ՀԿՏՀ-ի միջոցով տրամադրվող ծառայությունների զգալի մասը կարող են մատուցվել նաև առցանց եղանակով: Սակայն քաղաքացիները, ցանկության դեպքում, կարող են նույն այդ ծառայությունները ստանալ համայնքապետարաններում կամ ՔՍԳ-ներում (առկայության դեպքում):

Ծառայությունների մատուցման ընթացակարգերը մանրամասնորեն նկարագրված են և հասանելի են համայնքային կայքերի միջոցով: Ծառայությունների համար դիմած քաղաքացիները կարող են առցանց եղանակով հետևել ծառայությունների տրամադրման ընթացքին, անհրաժեշտության դեպքում դիմել մասնագետներին, ինչպես նաև գնահատել մատուցված ծառայությունների որակը: Քաղաքացիները կարող են համայնքային կայքերի միջոցով առցանց գրանցել իրենց համայնքներում արձանագրված խնդիրները և ակնկալել լուծումներ տեղական իշխանություններից:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության բարձրացման և բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ իրականացվել են նաև այլ միջոցառումներ: Մասնավորապես.

- ՀՀ համայնքներից Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, Շիրակի մարզի Արեգնադեմ գյուղում, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում իրականացվել են SMS հարցումներ: SMS հարցումը մատչելի և յուրօրինակ գործիք է, որը կարող է նպաստել համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև կապի ամրապնդմանն ու որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովմանը: Այս միջոցառման իրականացումը նույնպես պայմանավորված է բաց կառավարման գործընկերությամբ: Սպասվում է, որ այս պարտավորության իրականացման արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինները կունենան համայնքային խնդիրների առաջնահերթության առավել հստակ պատկեր, հարցմանը կներգրավվեն համայնքների բնակիչներ, որոնց պատասխաններից կախված կլինի խնդիրների կարգավորման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

- Աշխատանքներ են կատարվում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծման, թարմացման, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակման, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցման և ավագանու նիստերի առցանց հեռարձակման ուղղությամբ:

- 2015 թ. հոկտեմբերի 27-ից 29-ը Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում կայացած «Բաց կառավարման գործընկերություն» (OGP) նախաձեռնության գլոբալ համաժողովի շրջանակում ամփոփվել են 2015 թ. մարտին մեկնարկած 2-րդ ամենամյա ԲԿԳ միջազգային մրցույթի արդյունքները: Այս տարվա թեման է եղել «Հանրային ծառայությունների բարելավումը բաց կառավարման սկզբունքների գործածմամբ»: Մրցույթի մասնակցության հայտ են ներկայացրել ԲԿԳ նախաձեռնության անդամ 35-ից ավելի երկրներ (երկրների թիվը 66 է): Հայաստանը ներկայացրել է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում»

նախաձեռնությունը (մրցույթում ներկայացվել է «Խելացի համայնքապետարան» (Smart Municipality) անվանմամբ) և արժանացել բարձր մրցանակի՝ զբաղեցնելով տարածաշրջանում (Ասիա-Խաղաղօվկիանոս) առաջին տեղը: Հայտերը գնահատել է 23 անդամից բաղկացած անկախ միջազգային պատվավոր ժյուրին:

Միջոցառումների 42-րդ կետ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելու վերաբերյալ առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի ներկայացում:

Արդյունք

Ընթացիկ տարվա հոկտեմբերի 15-ին կայացած ՀՀ կառավարության նիստում ՀՀ կառավարությունը N 46 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացրել ՀՀ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի և «Ինթեգրիթի Էքշըն» կազմակերպության միջև կնքվող ՀՀ Հայաստանի Հանրապետությունում 46 հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման և մշտադիտարկման իրականացման մասին» համաձայնագրին, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի և «Ինթեգրիթի Էքշըն» կազմակերպության միջև կնքվել է Հայաստանի Հանրապետությունում 46 հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման և մշտադիտարկման իրականացման մասին համաձայնագիր: Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող այս ծրագիրը նպատակ ունի նպաստել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի նվազեցմանը և կարևոր նշանակություն ունեցող հանրային ծառայությունների ոլորտում ինտեգրացման գործընթացի բարձրացմանը: Ծրագրի տևողությունը 3 տարի է, որի ընթացքում Հայաստանի Հանրապետության 46 հանրակրթական դպրոցներում «Ինթեգրիթի Էքշըն» կազմակերպությունը կանցկացնի բարեխղճության (բարեվարքության) վերաբերյալ դասընթացներ աշակերտների, ուսուցիչների, աշակերտների ծնողների, տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար, որպեսզի նրանք հետագայում հետադարձ կապով կարողանան գնահատել համայնքի բավարարվածությունը և շինարարական աշխատանքների համապատասխանությունը շինարարական (օրենսդրական) պահանջներին՝ իրականացնելով հակակոռուպցիոն մոնիթորինգ:

23.09.2015 թ-ին ՀՀ արդարադատության նախարարության և քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների (շուրջ 70 հասարակական կազմակերպություն) կողմից ձևավորված կոալիցիայի միջև ընդունվել է համատեղ հայտարարություն պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության մասին, որի արդյունքում ձևավորվել են հակակոռուպցիոն աշխատանքային հարթակ և հակակոռուպցիոն աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբերի ստեղծումը նպատակ է հետապնդում ուսումնասիրել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ավելի ակտիվ մասնակցության, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018թթ.-ի միջոցառումների ծրագրի պատշաճ կատարման, ապօրինի հարստացումը քրեականացնելու, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտին առնչվող այլ արդիական հարցեր:

Միջոցառումների 53-րդ կետ

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգի մշակում ու ներդնում:

Արդյունք

ՀՀ կառավարությունը 2014թ. ապրիլի 10-ին ընդունել է «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը»:
Միջազգային գործընկերների հետ համագործակցության արդյունքում «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգը» և նոր հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա իրականացման ծրագիրը կենտրոնացել են 4 գերակա ոլորտների վրա՝ կրթություն, առողջապահություն, պետական եկամուտներ և ոստիկանություն: 2014թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ կառավարության աշխատակազմում «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և ինստիտուցիոնալ համակարգերի քննարկման վերաբերյալ» օրակարգով տեղի է ունեցել հանդիպում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, որի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ-ն (USAID) հայտնել է պատրաստակամություն՝ տրամադրել ֆինանսական օժանդակություն Հայաստանի Հանրապետության 2015-2018 թթ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համար:

2015թ. փետրվար 19-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի

հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին>> N 165-Ն որոշումը, որը վերաբերում է նաև փորձագիտական հանձնախմբի ձևավորման սկզբունքներին և գործառույթներին: 2015թ. հուլիսի 28-ին տեղի է ունեցել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստը, որտեղ հավանություն է տրվել ԱՄՆ ՄԶԳ-ի հետ կնքվելիք համաձայնագրի և դրան կից փաստաթղթերի նախնական տարբերակներին: Համաձայնագրով նախատեսվում է ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրել 750.000 դոլարի ֆինանսական օժանդակություն 1 տարվա համար, որը հնարավորություն կտա ձևավորելու փորձագիտական հանձնախումբը: Ինչպես ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի 165-Ն որոշմամբ, այնպես էլ ԱՄՆ ՄԶԳ-ի հետ կնքվելիք համաձայնագրով նախատեսված է, որ 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգի մշակումն իրականացնելու է փորձագիտական հանձնախումբը: Այժմ աշխատանք է տարվում համաձայնագրին և դրան կից փաստաթղթերին ավարտուն տեսք տալու և դրանք ստորագրելու համար: Նախատեսվում է, որ դա տեղի կունենա մինչև ընթացիկ տարվա ավարտը:

***ՀՀ կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի
մոնիթորինգի բաժին***